ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 172. Ծառայողական և առևտրային գաղտնիքի ստացումը և պահպանումը
(վերնագիրը լրաց. 14.12.04 ՀՕ-28-Ն)

1. Քրեական դատավարության ընթացքում ձեռնարկվում են ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանման՝ օրենքով նախատեսված միջոցներ:

2. Դատավարական գործողություններ կատարելիս առանց անհրաժեշտության չպետք է հավաքվեն, պահվեն, օգտագործվեն և տարածվեն ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններ: Դատարանի, ինչպես նաև հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի պահանջով քննչական և դատական գործողությունների մասնակիցները պարտավոր են չհրապարակել նշված տեղեկությունները, որի համար նրանցից վերցվում է ստորագրություն:

3. Անձինք, որոնց քրեական վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան հաղորդել կամ ներկայացնել օրենքով պահպանվող գաղտնիք պարունակող տեղեկություններ, չեն կարող վկայակոչելով ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունը, հրաժարվել այդ պահանջը կատարելուց, սակայն իրավունք ունեն դատարանից, դատախազից, քննիչից, հետաքննության մարմնից նախապես ստանալ նրանց կողմից նշված տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը հաստատող, համապատասխան քննչական կամ դատավարական գործողության արձանագրության մեջ արտացոլման ենթակա պարզաբանում:

3.1. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները նոտարական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ դատարանի որոշման հիման վրա:

3.2. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշման հիման վրա:

3.3. Քրեական հետապնդում իրականացնող մարմինները վարկային բյուրոյից վարկային տեղեկատվություն կամ վարկային պատմություն կարող են ստանալ միայն դատարանի որոշման հիման վրա:

3.4. Սույն հոդվածի 3.2-րդ մասում սահմանված կանոնները չեն գործում Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների ցանկի, յուրաքանչյուր հաշվի տեսակի և կարգավիճակի վերաբերյալ տվյալների, ինչպես նաև բաժնետոմսերի և դրանց սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ տեղեկատվության տրամադրման առնչությամբ: Սույն մասում նախատեսված տեղեկատվությունը քրեական հետապնդում իրականացնող մարմինները ստանում են «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված կարգով:

4. Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող, իրեն վստահված տեղեկությունների վերաբերյալ ցուցմունքներ տվող պետական ծառայողը և անկախ սեփականության ձևից՝ ձեռնարկության, հիմնարկի կամ կազմակերպության աշխատողն այդ մասին գրավոր հաղորդում է համապատասխան ղեկավարին, եթե դա նրան ուղղակիորեն չի արգելում վարույթն իրականացնող մարմինը:

5. Ծառայողական, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների վերաբերյալ ապացույցներն այն անձանց պահանջով, որոնց սպառնում է նշված տեղեկությունների հրապարակումը, կարող են հետազոտվել դռնփակ դատական նիստում:

(172-րդ հոդվածը լրաց. 14.12.04 ՀՕ-28-Ն, փոփ., լրաց. 27.02.07 ՀՕ-114-Ն, 22.10.08 ՀՕ-196-Ն, 24.06.10 ՀՕ-103-Ն, խմբ. 21.06.14 ՀՕ-115-Ն)